# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի « Հրազդանի N 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (2 մասնագետ 15, 19 դասաժամ), ֆիզկուլտուրայի(20 դասաժամ) , ինֆորմատիկայի (9 դասաժամ), կերպարվեստ (4 դասաժամ), մաթեմատիկա(10 դասաժամ), պատմություն( 15 դասաժամ), ֆիզիկայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:** Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 10--ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

**Մրցույթը տեղի կունենա 2025 թ. նոյեմբերի 13 --ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի N 7 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Հրազդան, Կաքավաձոր թաղամաս 1-ին փողոց 4**: Տեղեկությունների համար զանգահարել /077/ 73-85-93 հեռախոսահամարով: